Հավելված
Գորիս համայնքի ավագանու
2021 թվականի փետրվարի 16-ի N 02-Ա որոշման

Գորիս համայնք

2021թվականը ներդրումային ծրագրերի, կապիտալ շինաշխատանքների տեսանկյունից բարենպաստ չէր՝ տարեսկզբին համավարակով պայմանավորված, ապա պատերազմական իրավիճակով: Ստեղծված իրավիճակը նաև ռազմավարական նպատակների փոփոխության հիմք հանդիսացավ: Ջանքերը հիմնականում ուղղվեցին, պաշտպանական, անվանգության և հումանիտար խնդիրների լուծմանը: Այնուամենայիվ մի շարք ընթացիկ ծրագրեր՝ անկախ իրավիճակից ու դժվարություններից շարունակվեցին կյանքի կոչվել: Մյուս կողմից, նոր մարտահրավերը ենթադրում էին նոր նախաձեռնություններ, որոնք անգամ պատերազմական իրավիճակում, ընթացք ստացան, քանի որ ռազմավարական նշանակություն ունեին: Համայնքում շարունակվեցին 2020 թվականին մեկնարկած կապիտալ շինարարական աշխատանքները, որոնք միտված են համայնքի կենսական նշանակության, առաջնային խնդիրների հաղթահարմանը, տնտեսության առաջխաղացմանը, նոր ենթակառուցվածքների, ծառայությունների ստեղծմանն ու բարելավմանը:

1. **Համայնքի տնտեսական զարգացմանն ուղղված ընթացիկ ծրագրեր**

✓ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Ակներ և Վերիշեն գյուղերի կարիքների Ակներ գյուղի «Մթնաձոր» և «Բաբուռի քերծ» անվանյալ տարածքներում ջրհավաքների և սնուցող ջրագծի կառուցման աշխատանքներ: Ծրագիրն իրականացվել է ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով բյուջետային ֆինանսավորման ծրագրի շրջանակում/ ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է 90.900.0մլն ՀՀ դրամ, որից 40 տոկոսը՝ համայնքի ներդրումը:

✓ **Գորիս համայնքի Արզումանյան փողոցի Սևյան նրբանցքի և Ավանգարդ 4-րդ փողոցի ասֆալտապատման աշխատանքներ**

Ծրագիրն իրականացվել է ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով բյուջետային ֆինանսավորման ծրագրի շրջանակում/ ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է 124.800.000մլն ՀՀ դրամ, որից 40 տոկոսը՝ համայնքի ներդրումը:

✓ **Վերիշեն գյուղի արվեստների կենտրոնի հիմնանորոգման, հարակից այգու բարեկարգման, մոտեցող ճանապարհի ասֆալտապատման շինարարական աշխատանքներ:**

Ծրագիրն իրականացվել է ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով բյուջետային ֆինանսավորման ծրագրի շրջանակում/ ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է 86 140 000 ՀՀ դրամ:

✓ **Գորիս համայնքն անցնում է լուսավորման էներգաարդյունավետ կառավարման՝ նպատակ ունենալով էներգաարդյունավետության բարձրացման միջոցով խնայել էներգիան և կրճատել ջերմոցային գազերի արտանետումներ**

Գորիս քաղաքի լուսավորության ցանցն ունի 1556 լուսատու: Համայնքի ղեկավարի հանձնարարականով խնդիր է դրվել առկա էներգատար լուսատուները փոխարինել ժամանակակից, էներգաարդյունավետ և ավելի երկարակյաց լուսատուներով, որոնք աշխատում են լուսարձակման բարելավված ցուցանիշներով օժտված լուսադիոդներով: Արդեն փոխարինվել են 620 լուսատուներ:

- **Համայնքում իրականացվող ներդրումային ծրագրերը**
  - ✓ Գորիսի Թիվ 7 ՆՈՒՀ-ում անց է ակցվել ջեռուցման համակարգ:
  - ✓ Գորիսի թիվ 3 ՆՈՒՀ-ույմ անց է կացվել ջեռուցման համակարգ
  - ✓ ԹԻվ 6, Թիվ 3 ՆՈՒՀ-երի, համայնքապետարանի երկու վարչական շենքերի , Մշակույթի կենտրոնի տանիքներին ֆոտովոլտային կայանների տեղադրվել: թվով 5 շինություններում տեղադրվել են 130 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգեր, որոնք տարեկան կապահովեն մոտ 170,000 կՎտժ էներգիայի արտադրություն: Համակարգերի շահագործման արդյունքում կխնայվի 7,4 միլիոն ՀՀ դրամ:
  - ✓ Շարունակվում են Գորիս համայնքի պատմական միջուկի հիմնանորգման աշխատանքները: Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 680.000.000 ՀՀ դրամ:
    Փոխվել են պատմական շինությունների տանիքները, կոլորիտային պատշգամբները:
    Ծրագրի շրջանակներում նաև՝
    - Փոխվում են կենտրոնում գործող առևտրային կենտրոնների դռները, բնակելի և հասարակական շինությունների պատուհանները: Պատմական շինությունների ճակատային հատվածի վերականգնման աշխատանքները ևս ավարտված են:
    - Առաջիկայում կմեկնարկեն նաև կենտրոնական հատվածի պատմա-մշակութային միջավայրի՝ Գուսան Աշոտ (620 մ), Կոմիտաս (469 մ), Մակիչ (281 մ), Օրբելյան (182 մ), Մաշտոց (341 մ), Անկախության (134 մ), Տաթևացի (341 մ) փողոցների վերականգնման և արտաքին լուսավորության անցկացման աշխատանքները:
    Փողոցների ճանապարհային և մայթերի հատվածները կկառուցվեն բազալտե և բետոնե սալիկներից: Վերականգնվող փողոցներում ամբողջությամբ կփոխվեն գլխավոր ջրագծերը, գլխավոր կոյուղագծերը, էլ սնուցման ցանցը:
  - ✓ Վարարակն գետի հարակից տարածքների հիմնանորոգում

  Ընթացիկ ծրագրեր
  - ✓ Հիմնանորոգվել է Գորիսի մանկական գրադարանի սանհանգույցը
  - ✓ Կահավորվել և տեխնիկապես վերազինվել են մանկական երկու գրադարանները
  - ✓ Գորիս համայնքի բնակավայրերում՝ Քարահունջ, Որոտան, Վերիշեն, Խնձորեսկ, Հարթաշեն, բացվել են մանկական կենտրոններ՝ կահավորված և տեխնիկապես վերազինված:

Համայնքի բնակավայրերում իրականացված և ընթացիկ ծրագրեր

- Բնակավայրերում շարունակվում են առաջնային, հրատապ լուծում պահանջող խնդիրների լուծման աշխատանքները: Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում, եզրառուների կառուցում, կոյուղագծերի անցկացում. լուսավորության խնդրի լուծում, աղբահանության որակի բարելավում: